Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 05-ը ապրիլի 2018 թվական **քաղաք Գյումրի**

2018 թվականի ապրիլի 5-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքների ղեկավարներից նիստին մասնակցում էին՝ 40-ը:

Պեմզաշեն և Մեղրաշեն համայնքների ղեկավարները բացակայում էին հարգելի պատճառներով:

Մարզի խորհրդի նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալները, խորհրդականները, օգնականները,
- մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը՝

1. **2018 թվականի առաջին եռամսյակում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

2. **Մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

3. **Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կարիքների գնահատման և հանրակրթություն վերադարձնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Լիլիթ Գորգինյան

4. ՀՀ Շիրակի մարզի համայնքներին սուբվենցիաների հատկացման նպատակով հայտերի ներկայացման կարգի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, հաստատվեց օրակարգը:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 1. 2018 թվականի առաջին եռամսյակում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

(Զեկուցագիրը կցվում է):

Մարզպետն անընդունելի համարեց մարզի որոշ համայնքների ղեկավարների կողմից 2018 թվականի երեք ամիսներին սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշները:

Մասնավորապես նշեց Գեղանիստ համայնքը, որտեղ սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 22 տոկոսով: Նա հարկ համարեց նշել, որ արդար չէ, երբ պետությունը դոտացիան տրամադրում է 100 տոկոսով, իսկ համայնքի ղեկավարի ոչ ճիշտ աշխատանքի արդյունքում արձանագրվում է այսպիսի ցածր ցուցանիշ: Համեմատական տանելով հարևան համայնքների հետ՝ նշեց, որ չի կարող հարևան համայնքը՝ օրինակ Նոր Կյանքը, 147.1 տոկոս ցուցանիշ ապահովել, իսկ Գեղանիստը՝ 22 տոկոս: Այս պարագայում արդարացումները հիմնավորված չեն:

Մարզպետը հորդորեց համայնքների ղեկավարներին ավելի արդյունավետ աշխատել, սեփական եկամուտների հավաքագրման ծավալները մեծացնելու այլ մեթոդներ մշակել, քանի որ դրանք ամբողջապես ուղղվում են համայնքների կարիքների բավարարմանը:

ԼՍԵՑԻՆ 2. Մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

(Զեկուցագիրը կցվում է):

Այնուհետև առանձին համայնքների ղեկավարներ անդրադառնալով զեկույցում նշված՝ աշնանացան ցորենի ցանքսերի նվազմանը նշեցին, որ այն հիմնականում պայմանավորված է

ցորենի սերմնաբուծության պետական ծրագրի կասեցմամբ և եթե պետությունը համայնքներին չաջակցի, ապա հաջորդ տարիներին ցուցանիշները էլ ավելի կնվազեն:

Մարզպետը նշեց, որ պետությունը ստիպված 120.0 մլն դրամ զիջեց, քանի որ այդ ծրագրով որոշ համայնքների բնակիչներ տարիներ շարունակ չէին վճարում պարտքերը: Բացի այդ, եղան հարուցված քրեական գործեր որոշ համայնքների ղեկավարների նկատմամբ, այնպես որ ծրագիրը դադարեցվել է, որովհետև առանձին դեպքերում եղել են չարաշահումներ:

Մարզպետը կարծիք հայտնեց նաև, որ ոչ ավանդական գյուղատնտեսությամբ շատ առաջ գնալ հնարավոր չէ, անհրաժեշտ է գյուղատնտեսության դիվերսիֆիկացիա՝ բարձրարժեք մշակաբույսերի աճեցում:

ԼՍԵՑԻՆ 3. Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կարիքների գնահատման և հանրակրթություն վերադարձնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Լիլիթ Գորգինյան

(Զեկուցագիրը կցվում է):

ԼՍԵՑԻՆ 4. ՀՀ Շիրակի մարզի համայնքներին սուբվենցիաների հատկացման նպատակով հայտերի ներկայացման կարգի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան

Համայնքների ղեկավարներին ներկայացվեց ամբողջական տեղեկատվություն՝ համայնքներին սուբվենցիաների հատկացման հայտերի ներկայացման կարգի վերաբերյալ:

Մասնավորապես տեղեկացվեց, որ սուբվենցիայի տրամադրման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացվող հայտերը քննարկվում և գնահատվում են համապատասխան հանձնաժողովի կողմից:

Նշվեց, որ սուբվենցիա տրամադրելու համար հիմնականում կդիտարկվեն այն ծրագրային հայտերը, որոնց իրականացումը կնպաստի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդերի) ստեղծմանը (ձեռք բերմանը) կամ դրանց արժեքի ավելացմանը, իսկ ոչ խոշորացված համայնքների դեպքում՝ այն հայտերը, որոնք 2017 թվականին ապահովել են սեփական եկամուտների առնվազն 100 տոկոս կատարողական, իսկ 2018 թվականի համար պլանավորված համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը գերազանցում են համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերին:

Զեկուցողը նշեց հայտերի ներկայացման ժամկետները, դրանց գնահատման համար կիրառվող մոտեցումներն ու սկզբունքները: Հայտերի գնահատման բազմագործոն չափորոշիչներն հաշվի առնելով՝ համապատասխան հանձնաժողովը կայացնելու է հայտի ֆինանսավորման վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն:

Սուբվենցիայի տրամադրման դրական եզրակացություն տրվում է ընդհանուր միջին 6 և բարձր գնահատման միավոր ունեցող ծրագրային հայտերին:

Զեկույցի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից հնչեցված հարցերին մարզպետի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Մարզի խորհրդի նիստն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Տաթևիկ Առաքելյանը

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

2018 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2018 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 87.2%-ով, նախատեսված 567 804.8 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 494 887.0 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է 72 917.8 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2018 թվականի բյուջեների երեք ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	**2018թ. նախատեսված սեփական եկամուտներ**	**Փաստացի կատարողական**	**Շեղում /+,-/**	**Կատ. %**
Հողի Հարկ	75 885.7	67 804.4	- 8 081.3	89.4
Գույքահարկ	205 074.6	182 049.9	- 23 024.7	88.8
Պետական տուրք	12 229.3	11 254.6	- 974.7	92.0
Տեղական տուրք	34 883.5	34 846.8	- 36.7	99.9
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	87 714.1	65 830.9	- 21 883.2	75.1
ա/ հողի վարձավճար	74 320.9	53 524.2	- 20 796.7	72.0
բ/գույքի վարձավճար	13 393.2	12 306.7	- 1 086.5	91.9
Այլ եկամուտներ	152 017.7	133 100.5	- 18 917.2	87.6
Ընդամենը սեփական եկամուտներ	567 804.8	494 887.0	- 72 917.8	87.2

2018 թվականի երեք ամիսների փաստացի հավաքագրվածի աճի տոկոսը 2017թվականի համեմատությամբ կազմում է 39.6% կամ ավել է հավաքագրվել 140,289.4 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

Հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2018թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	Կատ. %
1.	Անի	30 075.0	29 374.3	- 700.7	97.7
2.	Ամասիա այդ թվում՝	19 008.2	17 052.9	- 1 955.3	89.7
2.1.	Ամասիա	7 626.0	9 263.0	- 1 637.0	121.5
2.2.	Արփի	11 382.2	7 789.9	- 3 592.3	68.4
3.	Արթիկ	81 038.2	72 089.2	- 8 949.0	89.0
4.	Ախուրյան այդ թվում՝	95 292.0	71 704.6	- 23 587.4	75.2
4.1.	Ախուրյան	47 331.5	29 901.0	- 17 430.5	63.2
4.2.	Մարմաշեն	16 170.3	13 445.4	- 2 724.9	83.1
5.	Աշոցք այդ թվում՝	22 659.1	14 334.4	- 8 324.7	63.3
5.1.	Աշոցք	13 708.9	9 903.0	- 3 805.9	72.2
5.2.	Սարապատ	8 950.2	4 431.4	-4 518.8	49.5

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2018 թվականին սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում՝ 63.3%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 58.2% կամ աճի տոկոսը կազմում է 5.1, գումարային աճը կազմել է 2,842.9 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2018թվականին սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 90.8%, **Արթիկ** քաղաքը՝ 97.6%:

Մարզի թվով 22 համայնքներ չեն ապահովել 2018թվականի երեք ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 87.2%-ը, այդ թվում՝ թվով 5 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2018 թվականին երեք ամիսներին նախատեսված 1 106 205.0 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

Դաշտավարություն

2018թվականին մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի կանխատեսվող ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /հա/
		2017թ.	2018թ. ***կանխատեսվող***	
1.	Հացահատիկ	41996	40558	**-1438**
	այդ թվում աշնանացան ցորեն	21729	18058 **(փաստացի)**	**-3671**
	գարնանացան գարի	20267	22500	**+2233**
2.	Կարտոֆիլ	3721	4000	**+279**
3.	Բանջարեղեն	1758	1900	**+142**
4.	Կերային մշակաբույսեր	12980	14000	**+1020**
5.	Տեխնիկական մշակաբույսեր	171	175	**+4**
Ընդամենը		**60626**	**60633**	**+7**

2018թվականին բերքի տակ ցանվել է 18058 հա աշնանացան ցորեն, որը նախորդ տարվանից պակաս է շուրջ 3000 հա: Ըստ մեր դիտարկումների ցանքատարածությունները ձմեռացման ընթացքում վնասներ չեն կրել: Եղանակային պայմանները նպաստավոր են գարնանացան կատարելու համար և մարզում ընթանում են գարնանացանի աշխատանքներ, կատարվել է շուրջ 8000 հա գարնանացան հացահատիկի և բազմամյա խոտերի ցանքեր: Գարնանացանի աջակցության համար ՀՀ կառավարության կողմից իրականացվում է «Գարնանացան ցորենի, գարնանացան գարու, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի» արտադրության զարգացման, «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման» և «Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման» ծրագրեր:

Նշված ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվում է շուրջ 2300 հա-ով ավելացնել գարնանացանի տարածությունները՝ հասցնելով շուրջ 22500 հա-ի:

04.04.2018թ. դրությամբ մարզում իրացվել է շուրջ՝ գարնանացան գարի 510 տոննա /ֆոնդ 744 տոննա/, կորնգան 140 տոննա /ֆոնդ 170 տոննա/, գարնանացան ցորեն 11 տոննա /ֆոնդ 45 տոննա/, առվույտ 2.5 տոննա /ֆոնդ 12 տոննա/, եգիպտացորեն 0.6 տոննա /ֆոնդ 8 տոննա/, ոլոռ 0 տոննա /ֆոնդ 4 տոննա/, սիսեռ 0 տոննա /ֆոնդ 3.4 տոննա/ և հնդկացորեն 0 տոննա /ֆոնդ 4.3 տոննա/:

Վերջին տարիներին առաջընթաց է գրանցվել նոր մշակաբույսերի մշակության արմատավորման գործում՝ հնդկացորենի, կտավատի, ոլոռի, սիսեռի, ոսպի, չամանի, ինչպես նաև այլ բարձրարժեք մշակաբույսերի, որոնց տնտեսական արդյունավետությունը մոտ 2-3 անգամ գերազանցում է հացահատիկային մշակաբույսերին.

Մշակաբույսը	**Տարածությունը /հա/**
Հնդկացորեն	227.2
Կտավատ	162
Ոլոռ	29
Ոսպ	10
Սիսեռ	45
Չաման	35

Մարզում գրանցվել է նաև նոր այգիների հիմնման աճ, մասնավորապես Անպեմզա, Ողջի, Մարմաշեն և Ախուրյան բնակավայրերում:

Գարնանացանի աջակցության ծրագրերին զուգահեռ մարզում իրականացվում է ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման, հակակարկտային ցանցերի և կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման, գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության, սպանդանոցային կարողությունների զարգացման, տավարաբուծական և ոչխարաբուծական տոհմաբուծարանների ստեղծման, սառնարանային տնտեսությունների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրեր:

Առաջին եռամսյակում նշված ծրագրերի իրականացման ուղղությամբ նկատվում է պասիվություն, ինչպես համայնքների, այնպես էլ ֆերմերային տնտեսությունների կողմից: Առաջարկվում է համայնքների ղեկավարներին ևս մեկ անգամ նշված ծրագրերի վերաբերյալ իրազեկելու համայնքների գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին:

Անասնապահություն

Հունվարյան հաշվառման արդյունքում մարզում պակասել է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների քանակը, որի արդյունքում ավելացել է մսի արտադրությունը: Պետպատվերի շրջանակներում առաջին եռամսյակում իրականացվել են 15500 գլուխ խոշոր եղջերավոր

կենդանիների բրուցելյոզի ախտորոշիչ հետազոտություններ և 64000 գլուխ խոշոր և 10100 գլուխ մանր եղջերավոր կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով առաջարկվում է համայնքների ղեկավարներին իրենց կողմից ներկայացված թեկնածուներին հրամանագրել համայնքը սպասարկող անասնաբույժ, քանի որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում հուլիսի 1-ից ամբողջությամբ անցնելու ենք սպանդանոցային մորթի, համայնքները սպասարկող անասնաբույժի աշխատանքային գործունեությունը կլինի հույժ կարևոր, ինչպես սպասարկման, այնպես էլ առողջ և մաքուր մսամթերքի արտադրության, անասնաբուժական փորձաքննության, եզրակացության տրամադրման կարգի և ուղեկցող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերի տրամադրման գործում:

Ջրամբարների լցվածությունը 04.04.2018թ. դրությամբ

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 04.04.2017թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 04.04.2018թ. /մլն մ³/	Աճ/նվազում (+/-) /մլն մ³/
1.	**Ախուրյան**	525	318.0	310.4	**-7.6**
2.	**Արփի լիճ**	105	26.7	23.6	**-3.1**
3.	**Կառնուտ**	22.6	10.58	8.74	**-1.84**
4.	**Սառնաղբյուր**	4.8	0.42	0.35	**-0.07**
5.	**Վարդաքար**	5	1.02	1.07	**+0.05**
6.	**Թավշուտ**	6	0.33	1.1	**+0.77**
7.	**Մանթաշ**	8.2	1.3	0.78	**-0.52**
8.	**Ջաջուռ**	0.28	0.22	0.19	**-0.03**
Ընդամենը		**151.88**	**40.57**	**35.83**	**-4.74**

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կարիքների գնահատման և հանրակրթություն վերադարձնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Լիլիթ Գորգինյան

Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կարիքների գնահատման և հանրակրթություն վերադարձնելու ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 28 երեխա, որոնցից 3-ը՝ Սարապատ համայնքի ԽՀՀ-ի, բաժնի և Կոտայքի մարզպետարանի համատեղ կատարված աշխատանքների արդյունքում ընդգրկվել են հանրակրթություն:

Մյուս 25 երեխաներից 11-ը դպրոց չեն հաճախում առողջական խնդիրների պատճառով, 11-ը՝ ծնողի ցանկությամբ և 3-ը՝ սոցիալական վիճակով պայմանավորված: Այս պատճառներից ոչ մեկը չի կարող հիմավորում լինել, որպեսզի երեխան դուրս մնա հանրակրթությունից: Ուստի, անհրաժեշտ է կատարել խորքային ուսումնասիրություններ յուրաքանչյուր երեխայի ընտանիքում, վեր հանել բուն խնդիրը և երեխայի կրթություն ստանալու իրավունքը իրականացնել:

Այս աշխատանքի պատասխանատուն համայնք է, մասնավորապես համայնքի ԽՀՀ-ը՝ որպես երեխաների պաշտպանության առաջին մակարդակ: Հանձնաժողովը անգիր պետք է իմանա խոցելի խմբերի ընտանիքներին, այդ ընտանիքների երեխաներին և ձեռնարկի օրենքով իրեն վերապահված անհրաժեշտ գործողություններ:

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետները մինչև 2018 թվականի օգոստոս ամիսը այցելություններ կունենան Գյումրի, Արթիկ, Անի, Արփի, Ազատան, Բայանդուր, Հոռոմ, Անուշավան, Արևշատ, Նոր Կյանք, Փանիկ, Սարալանջ համայնքներ, կհանդիպեն համայնքների ԽՀՀ-ի հետ և կքննարկեն բոլոր դեպքերը համայնքների ներկայացմամբ: Անհրաժեշտության դեպքում կհանդիպեն նաև ծնողների հետ, կառաջարկեն օրենսդրական լուծումներ:

Հասկանալի և օբյեկտիվ պատճառ է, երբ երեխան ունի առողջական խնդիրներ, սակայն համայնքում չի իրականացվում ներառական կրթություն: Ենթադրում եմ, որ պետք է հստակեցնել խնդրի բարդության աստիճանը: Պարզել՝ երեխան հաշմանդամություն ունի, թե ոչ, երեխայի հիվանդությունը մտավոր է, ֆիզիկական, կամ զուգորդված, արդյոք հիվանդությունը կրում է ժամանակավոր բնույթ:

Պարզաբանումից հետո միայն հնարավոր է երեխային ընդգրկել հանրակրթություն, կամ կազմակերպել տնային ուսուցում: Մարզպետարանը պատրաստ է աջակցել համայնքներին, սակայն ակնկալում ենք նաև համայնքների շահագրգիռ արձագանքը, քանի որ երեխաներին վերաբերող ցանկացած խնդիր պետք է լինի համայնքի ուշադրության կենտրոնում: